Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Սվարանցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ (0,5 հաստիք), (1,5 դասաժամ), պատմություն (7,5 դասաժամ), աշխարհագրություն (3,5 դասաժամ), քիմիա (3 դասաժամ), կենսաբանություն (3 դասաժամ), ֆիզիկա, բնագիտություն (8 դասաժամ), երաժշտություն (1,5 դասաժամ), կերպարվեստ (1,5 դասաժամ), տեխնոլոգիա (1,5 դասաժամ), ինֆորմատիկա (2,5 դասաժամ), ֆիզկուլտուրա (9 դասաժամ), առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Սվարանցի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Սյունիքի մարզ գ. Սվարանց: Տեղեկությունների համար զանգահարել (077) 58-73-63 հեռախոսահամարով: